ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱՁԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՊԱՐՈՆ ԱՐՏԱՇԷՍ ՄԱԹԵՒՈՍԵԱՆԻՆ ՈՐ ՅԵՐԵՒԱՆ, Ի ՀԱՅԱՍՏԱՆ

Անցնող երկու տարիների ընթացքում մօտից հետևել ենք Ձեր գիտահետազօտական աշխատանքներին՝ և դասախօսական գործունէութեանը Մայր Աթոռոյս՝ Սրբոյ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանում:

Հայ ձեռագրական, մանրանկարչական և մատենագրական ժառանգութեան բնագաւառում անգնահատելի ծառայութիւններ էք մատուցել Ձեր ուսումնասիրական մենագրութիւններով, որոնցով հայոց մատենագրական աւանդութեան կարևոր էջեր և հարցեր ու երևոյթներ նոր լոյսի տակ բերուեցին: Մաշտոցեան Մատենադարանը եղաւ Ձեր երկրորդ տունը:

Դուք գիտցաք մեր Հոգևոր Ճեմարանի ուսանողների մէջ զարթեցնել և մշակել սէրը հանդէպ հայ ձեռագրական աւանդին և նաև նրանց փոխանցել գիտական պրպտումների առողջ մեթոտը:

Ի գնահատութիւն Ձեր բազում գրական, գիտական և ուսուցչական սպասաւորութիւններին ի «բանական անդաստանս» մեր հայ ժողովրդին, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

Ս. ՍԱՀԱԿ-Ս. ՄԵՍՐՈՊ *շքանշանը:*

Աղօթում ենք առ Բարձրեալն Աստուած, որ նոր ոյժ և կորով ներշնչի Ձեզի, որպէսզի առաւել ևս առատանան բարիքները Ձեր ծառայութեանց հայոց "փոքր աժու"-ի կանաչաւէտ և բազմաստ պտղաբերման համար:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 24 Մարտի
Յամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 86: